

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՐԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԵՂԱԻ ՓՈԹՈՐԿԱԼԻ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Արարական 14րդ վեհաժողովը երէկ կէսօրէ առաջ ժամը 11:30ին Պէյ-րուսի «Ֆենիսիա» պանդոկին մէջ սկսաւ իր աշխատանքներուն:

Եզրապտոսի նախագահ Հիւսէնի Մուպարաբի, Յորդանանի Ապտալաթաբազաւորին եւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի բացակայութեան փոխարին վեհաժողովին առաջին օրը եղաւ բաւական «տաք», նկատի ունենալով, որ պաղեստինեան պատուիրակութիւնը քաշուեցաւ Անիստէն, իբրեւ բողոք Արաֆաթի խօսքին արբանեակային ուղղակի պատկերասփոման ղէմ դրուած լիբանանեան արգելքին ղէմ: Աւելի ուշ սակայն, պաղեստինեան պատուիրակութիւնը որոշեց այսօրուան նիստին ներկայ գտնուիլ, որովհետեւ Լիբանանի իշխանութիւնները համաձայն գտնուեցան ուղղակի պատկերասփոման:

Սիւս կողմէ, Իրաք - Քուէյթ յարաբերութիւններու որոշ ջերմացման արդեւորական արտաքին գործոց նախարարին յարաբերութիւնը քաշուեցաւ Անիստէն, իբրեւ բողոք Արաֆաթի խօսքին արբանեակային ուղղակի պատկերասփոման ղէմ դրուած լիբանանեան արգելքին ղէմ: Աւելի ուշ սակայն, պաղեստինեան պատուիրակութիւնը որոշեց այսօրուան նիստին ներկայ գտնուիլ, որովհետեւ Լիբանանի իշխանութիւնները համաձայն գտնուեցան ուղղակի պատկերասփոման:

Սիւս կողմէ, Իրաք - Քուէյթ յարաբերութիւններու որոշ ջերմացման արդեւորական արտաքին գործոց նախարարին յարաբերութիւնը քաշուեցաւ Անիստէն, իբրեւ բողոք Արաֆաթի խօսքին արբանեակային ուղղակի պատկերասփոման ղէմ դրուած լիբանանեան արգելքին ղէմ: Աւելի ուշ սակայն, պաղեստինեան պատուիրակութիւնը որոշեց այսօրուան նիստին ներկայ գտնուիլ, որովհետեւ Լիբանանի իշխանութիւնները համաձայն գտնուեցան ուղղակի պատկերասփոման:

Րաբրեալ յայտարարութեան մը շուրջ:

Ամենայնգէպս վեհաժողովին այսօրուան նիստը պիտի ըլլայ բաւական «ծանր» եւ անակրկալ կեցուածքներ եւ անսպասելի զիրքերուն շուրջ ակնկալելի են, նկատի առած օրակարգի հարցերուն բնոյթը եւ տարրուկութիւնը:

Յորդանանի Ապտալ-

Ան առաջին հերթին շնորհաւորեց հարաւային Լիբանանի ազատագրուած եւ բարձր գնահատեց այս վեհաժողովին համար նախագահ Էմիլ Լահուտի եւ լիբանանեան կառավարութեան ճիգերը: Յորդանանի վարչապետը հաստատեց, որ արաբներու հիմնահարցը հանդիսացող պաղեստինեան տագնապը վտանգաւոր գարգազմաներ կ'ապրի իսրայէլեան բռնարարներուն պատճառով:

«Հարցը հիմնականին մէջ ապահովական չէ, այլ՝ քաղաքական, եւ խաղաղութեան գործընթացի սառած վիճակը, շրջանային կացութեան վատթարացումը հետեւանքն են պաղեստինցիներուն հետ համաձայնութիւններէն քաշուելու իսրայէլեան փորձերուն, մանաւանդ որ հակամարտութեան պատճառներն են իսրայէլեան բռնարարներուն ու վայրագութիւնները», ըսաւ ան:

Ապու Ռադէպ վերահաստատեց, որ իսրայէլեան կողմէ գործընթացը հիմնուած է ՄԱԿի որոշումներուն եւ խաղաղութեան փոխարէն հող



Վեհաժողովին ընթացքին:

տարագին վրայ, այդ գործընթացը անմասնատելի ամբողջութիւն մըն է, իսկ արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութիւնը կը հաստատուի միայն արաբական իրաւունքներու վերադարձով:

Ան յիշեցուց, որ Ամմանի վեհաժողովը որոշած էր ոչ մէկ ճիգ խնայել լիբանանեան համար իրաքի եւ Քուէյթի հարցերը եւ բնականոնացնելու

անոնց յարաբերութիւնը: Յորդանանի թագաւորին ներկայացուցիչը գորակցութիւն յայտնեց շրջանի խաղաղութեան համար Մէնուսական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալաթաբազաւորին, որ յստակ պատգամ կ'ուղղէ աշխարհին, թէ արաբները խաղաղութիւն կ'ուզեն եւ անոր համար կ'աշխատին, մինչ իսրայէլն է գայն արգելակողը:

Այնուհետեւ յորդանանցի պաշտօնատարը ժողովի նախագահութիւնը յանձնեց զգաւոր Էմիլ Լահուտի: Նախագահ գոր. Էմիլ Լահուտ վեհաժողովի նախագահութիւնը ստանձնեց: Ան նախ կոչ ուղղեց մէկ վայրկեան յոտնկայութեամբ յարգելու արաբ նահատակներու յիշատակը, ապա արտա-

Շար.՝ էջ 2

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՆԵԹԱՆԻՈՅ ՄԷՁ. 15 ՄԵՌԵԱԼ ԵՒ ԱՒԵԼԻ ՔԱՆ ՀԱՐԻՒՐ ՎԻՐԱՒՈՐ

Պաղեստինցի մը երէկ երեկոյեան անձնասպանական գործողութիւն մը կատարեց Իսրայէլի Նեթանիա քաղաքին պանդոկներէն մէկուն ճաշարանին մէջ՝ սպաննելով 15 հոգի եւ վիրակոտելով աւելի քան հարիւր հոգի:

Անձնասպանական գործողութեան կարճ ժամանակ ետք, Համաս ստանձնեց յարձակումին պատասխանատուութիւնը: Համասի հաղորդագրութիւնը յայտնեց, որ թուրքամ Քաղաքի բնակիչ Ապտալ-Պասթ Օտէն ինքզինք պայթեցուցած է պանդոկին մէջ: Թուրքամ կը գտնուի Նեթանիայէն 10 քմ. հեռավորութեան վրայ:

Իսրայէլ անապարեց ամբաստանելու պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթը, ըսելով, որ ան «չէ յաջողած գսպել Իսրայէլի ղէմ յարձակում գործողները»:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ Դա-տապարտեց անձնասպանական գործողութիւնը եւ պահանջեց, որ «գաղթի սառնասիրտ մարդասպանութիւնը»:

Միւս կողմէ, իսրայէլեան ուժեր սպաննեցին երկու պաղեստինցիներ, որոնք փորձեցին հրէական քիւլոս մը թափանցել հարաւային շրջանին մէջ: Բանալը յայտնեց, որ պաղեստինցիները ձեռնառումներ նետեցին «Քիւնսֆիմ» քիւլոսի մօտ գտնուող զինուորներուն վրայ, որոնք հակադարձեցին կրակ բանալով ու սպաննելով երկու պաղեստինցիները: Բախումին վիրակոտեցան երկու զինուորներ, որոնցմէ մէկը գնդապետ է, աւելցուց բանակին մէկ բանբերը:

Նապլուսի մէջ սպաննուեցաւ պաղեստինցի մը, որ ըստ դրացիներուն՝ ուժեր կը պատրաստէր:

Անոնք աւելցուցին, որ ան հետեւող էր էֆ. Փէ. էլ. Փէ. ի եւ թէ յաճախ ուժեր կը պատրաստէր բնակարանին մէջ: Պաղեստինցիին անուշը չյայտարարեցաւ, սակայն ըստեցաւ, որ անոր հետ գտնուող անձ մըն ալ վիրակոտուած է ուժերին պայթումէն:

Իր կարգին, միջազգային ղէտերու խմբակի մը անդամներէն մէկը ըսաւ, որ ոստիկանի տարագրով պաղեստինցի մը երկու ղէտեր սպաննած է Երեքշաբթի գիշեր, Այսրլորդանանի մէջ: Պաղեստինեան իշխանութեան պաշտօնատարներ հերքեցին, որ պաղեստինցիներ գործած են արարքը: Սեպտեմբեր 2000ի սկսած պաղեստինեան ըմբոստութեան ընթացքին, առաջին անգամ ըլլալով օտար ղէտեր կը սպաննուին պաղեստինեան շրջաններուն մէջ: Սպաննուած երկու ղէտերը թուրք մը եւ գուրիքերից մըն էին: Վիրաւորուած է նաեւ երկրորդ թուրք ղէտ մը, որ յայտնեց, թէ գինեալը պաղեստինեան ոստիկանութեան տարագր հագուած էր: Ան աւելցուց, որ գինեալին ըսած են, թէ ղէտեր են եւ խնդրած որ կրակ չբանայ, սակայն ան կարեւորութիւն չէ տուած ու փամփուռաներու տարակիր մը տակ առած է երեքը:

Իսրայէլեան բանակը երէկ յայտնեց, որ անձնասպանական գործողութեան մը համար օդատարործուող

ակններով պատուած գօտի մը գտած է պաղեստինեան «Կարմիր Մահիկ»ի հիւանդատար ինքնաշարժներէն մէկուն մէջ, որ կին մը եւ անոր երեք զաւակները Ռամալլա կը փոխադրէր: «Կարմիր Մահիկ»ի մէկ պատասխանատուն՝ Հուսամ Շարքաուի յայտնեց, որ հետաքննութիւն պիտի բացուի, թէ եւ վստահ է, թէ իսրայէլ քարոզչութեան համար այսպիսի լուրեր կը հրատարակէ:

Իսրայէլացի զինուորական մը ըսաւ, որ գօտին կարուած էր վերարկուի մը մէջ, որ իր կարգին գաղտնի տեղ մը պահուած էր ինքնաշարժին մէջ:

●ՌՈՒՄԻՈՅ նախագահ Վլատիմիր Փութին կոչ

Շար.՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ

Երէկ Ս. Փետրուպուրկի մէջ սկսաւ ահաբեկչութեան դէմ պայքարին նուիրուած ԱՊՀի միջխորհրդարանական խորհրդարանական խորհրդարանական վեհաժողովին եւ Երուսաղիմի խորհրդարանական վեհաժողովին կողմէ: Խորհրդարանի կառուցումը կատարեց

Ռուսիոյ Պետական Տումայի նախագահ Կենատի Սեյեդինով, որ ընթերցեց Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի ուղերձը: Վլատիմիր Փութին առաջնահերթ խնդիր նկատած է ահաբեկչութեան դէմ պայքարը:

Նիստին ընթացքին, Երուսաղիմի խորհրդարանական վեհաժողովին նախագահ Փիթր Շիթեր յայտնեց, որ ահաբեկչութեան դէմ պետք է պայքարի երկու ժամկէտ ունեցող կիսատարուողներու ձեռնարկուած գործունէութեամբ: Ելոյթ ունեցան նաեւ Երուսաղիմի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Արտալա Սեյեդին, Ռուսիոյ անվարտանութեան ղաշնակցային բիւրոյի տնօրէն Նիքոլայ

Պատրուշեւ: Խորհրդարանի կողմէ սկսեցին նախագահական պատուիրակութիւնը, գլխավորութեամբ Ապտալաթաբազաւորինի ժողովի նախագահ Արմէն Սաչատրեանի: Ան իր խօսքին մէջ յայտնեց, թէ ահաբեկչութեան դէմ պայքարի ժողովին ներս Հայաստան միշտ պատաստ է համագործակցելու ԱՊՀի երկիրներուն հետ:

«Հայաստան կը դատապարտէ ահաբեկչութիւնը եւ կը գտնէ, թէ ահաբեկչութեան դէմ պայքարը պետք է երկարաժամկէտ եւ հետեւողական բնույթ կրէ: Այս առումով Հայաստան կ'ողջունէ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Արտալա Սեյեդին, Ռուսիոյ անվարտանութեան ղաշնակցային բիւրոյի տնօրէն Նիքոլայ

Շար.՝ էջ 2

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

ԵՐԿԻՐ

ՀՅԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՊԼԵՏՕՆԱԹԵՐԹ

«ԱԶՂԱԿ»ի Շաբաթ, 30 Մարտ 2002ի թիւին հետ մեր ընթերցողները պիտի ստանան Շ.Յ.Ն. Հայաստանի Գերագոյն Սարմինի պաշտօնաթերթը՝ «ԵՐԿԻՐ» շաբաթաթերթի 29 Մարտ - 4 Ապրիլ համարը:

ԱԲԽԱԶԻՈՅ ՄԷՁ՝ ՇԱՐԲ ՄԸ ՊԱՅԹՈՒՄՆԵՐ

ՍՈՒՌՈՒՄ, 27 (ՌՈՑԹԸԸԸ).- Վրաստանի անջատողական Աբխազիոյ շրջանին մէջ Ջորժաբաթի թի օր շաբթ մը պայթումներ տեղի ունեցան, որոնք պայթումներու հետեւեցան եւ, լարուածութիւնը աւելի եւս բարձրացնելով նահանգի մը մէջ, ուր արդէն բնակչութիւնը ունի այն մտավախութիւնը, թէ ամբերիկեան զինուորական մօտալուստ օժանդակութիւնները թիֆլիզի, կրնան համայնքային բնոյթի հակամարտութիւնները վերակենդանացնել:

Վրաստանի անջատողական Աբխազիոյ շրջանին մէջ Ջորժաբաթի թի օր շաբթ մը պայթումներ տեղի ունեցան, որոնք պայթումներու հետեւեցան եւ, լարուածութիւնը աւելի եւս բարձրացնելով նահանգի մը մէջ, ուր արդէն բնակչութիւնը ունի այն մտավախութիւնը, թէ ամբերիկեան զինուորական մօտալուստ օժանդակութիւնները թիֆլիզի, կրնան համայնքային բնոյթի հակամարտութիւնները վերակենդանացնել:

Սեւ ծովու «Օշաձիւրա» նաւահանգիստի շրջանին մէջ 4 տարբեր պայթումներ հարուածած են շոգեկառք մը, երկաթուղիի կայան մը, գլխաւոր ճամբայ մը եւ նաւահանգիստը, 3 հոգի սպաննելով ու 28 ուրիշներ ծանրորէն վիրակոտելով:

«Նահաբեկչական բնոյթի արարք մըն է՝ խաղաղ քաղաքացիներու ղէմ», եւ թէ գայն գործադրողները պիտի պատժուին:

Ռուսիա, որ առանց բացայայտ դարձնելու արխանգելսկոյ գործակալական Վրաստանի հետ 1992 - 93ի անջատողական բնոյթի պատերազմի օրերուն, յատնած է, թէ «ցասումով» լսած է, պայթումներուն լուրերը:

Շար.՝ էջ 9

ԹՈՒՐԵՍԻ

ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻՇԵԱՆՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԶՄԱԹԻՒ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ՊՈՒՍ, 27 (ՌՈՑԹԸԸԸ).- Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ Էճեմիթ Ջորժաբաթի օր յայտնած է, թէ Դրասական Միջազգային Ֆոնտին գորակցութիւնը վայելող կարգ մը բարեկարգումներ կրնան պետութեան իշխանութիւնը շատ մեծ համեմատութեամբ կրճատած ըլլալ, մտահոգութեանց դուռ բանալով պաշտօնատարներու եւ զբաղման պատասխանատուներու մօտ:

Շար.՝ էջ 10

ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԵՓԵԱՆԻ ԽՕՍԿԸ՝ ԸՆԿ. ՀՐԱՉ ՏԱՍԵԱՊԵՏԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Առեղծուածներով լեցուն է այս կեանքը: Խուլը յանկարծ լսում է աշխարհի ձայներն առաւել յստակ, քան առողջ ականջը, քան, ձայնային այլ յաճախականութիւններին յարմարեցուած, ասեմբ, միջատի կամ սողունի լսողական զգայարանը: Կոյրը տեսնում է յանկարծ յայնպիսի գունաեւրաններ, մանրէներ ու մանրատ շարժումներ, որ չեն տեսնի երբեք եւ ոչ մի տեսակի ռսպնեակի տակ... Եւ որքան էլ վիճելի համարուի դիտարկումս, ինձ համար առեղծուած է նաեւ Դաշնակցութեան կազմակերպական հաւաքականութեան մէջ անհատականութիւնները դրսեւորման երեւոյթը:

Ինչպէս են նրանք յայտնուում, ի՞նչպէս են հասունանում, կազմակերպութեան աւանդական ու խիստ ընդգծուած սահմանները չխախտելով, ինչպէս են գրաւում նորանոր բնագրծեր ու տարածքներ: Ի՞նչպէս են կարողանում իրենց հոգում լսելով ժամանակի ու հնարաւորութիւններին, մտաւոր ու նրխապէս մարդկային ներուժի, շատ յաճախ անհաւաքէտ մտման դառնութիւնը, սլաւը, եւ ինչպէս են, այսուհանդերձ, հասնում, պարզ ու հասարակ թուացող այն իմաստութեանը, ըստ որի՝ լաւ է քո մի մտը վառել, քան անիծել խաւարը: Ի՞նչպէս են նրանք կարողանում անտեսել օրուան մէջ կրած իրենց պարտութիւնը՝ յանուն վաղուան յաղթանակի: Այդ «օր» ասածը, մանաւանդ, յաճախ կէս կամ ամբողջ կեանք է արժենում, իսկ «վաղը» վերածուում, աստուած մեկայն գիտէ, թէ ինչ հեռավորութեան վրայ միայն ժողով անորոշութեան:

Հաւաքականութիւնն է նրանց ծնում, թէ՞ բնութիւնը...

Չգիտեմ. այնքան թեր հիմնաւորում կա մէկի կամ միւսի օգտին որքան եւ դէմ... Առեղծուած է...

«Եթէ ճիշդ է, որ կուռի մէջ կարգապահութիւնն ու խմբապետին հնազանդուելը հանդիսանում է յաղթութեան պայմաններէց մէկը, իսկ առօրեայ գործունակ կեանքում «ամբողջի ձայնը» շատ յաճախ լինում է «Աստուծոյ ձայն», ոչ պակաս ակներեւ է՝ որ անհատ հերոսներն ու մարգարէներն են, ըմբոստ ու անձնուր փոքրամասնութիւնն է, որ փոթորկելով հասարակական լճացած մթնոլորտը, վառած են, առաջ են տարած ճշմարտութեան, Արդարութեան եւ Ազատութեան ջրհոր...»:

Սա էլ՝ Սիմոն Զաւարեանի դիտարկումն է՝ արտայայտուած դեռեւս 1905 թուականին, երբ «օրուան» մէջ ինքը աւելի շատ պարտում էր, քան յաղթում և արժանանում, եթէ ոչ բացայայտ քամահարներ, ապա գոնէ թիկունքային քամիներով: «Ի նկատի առնենք՝ ասում էին ո՞ւմնք, Սիմոն Զաւարեանի հերթական վերլուծութիւնը, փաստարկը, մարգարէութիւնը լսելով,՝ ի նկատի առնենք ու մտնենք»: Եւ անցնում էին:

Եւ «օրուան» մէջ նա պարտուում էր, որովհետեւ գիտական, հասարակական եւ յատկապէս բարոյական հարցեր քննելիս, ճշմարտութիւնը պարզելու փորձ էին անում ոչ թէ ազատ քննադատութեամբ ու համոզումով, ինչպէս ինքը կ'ասէր,՝ այլ քուէարկութեամբ ու ձայների թուով: Ժողովրդավարութիւնը որոշում կայացնելու ուրիշ այլ սարք չունի, քան՝ քուէարկութիւնը: Բայց քուէարկութիւնը աւելորդներ է գործում, երբ որեւէ հաւաքականութիւն հասու չէ, պատրաստ չէ ժողովրդավար, այսինքն՝ գիտակցական ու ազատ քուէարկութեան: Էլ չիտեսնեք տխուր այն իրողութիւնից, որ քուէարկութիւնը, ցաւօք, հազար ու մի խորամանկ հնարքներով, հնարաւոր է կայացնել նաեւ քուէարկութիւնից առաջ...

Առեղծուած է, թէ՞ օրինաչափութիւն, այսուհանդերձ, փաստ, որ հարիւրհարիւր տարի տարուան ընթացքում, Դաշնակցութեան հաւաքականութեան ծնած, կամ այդ հաւաքականութեանը գիտնորագրուած անհատներին, պատմական այդ անձնաւորութիւնների ռատուութիւնը պտուրդ էր բերէր ուղածի ժողովրդին: Յաւօք, ժամանակի պահանջով, թէ այլ եւ այլ հանգամանքների բերումով, նոր անհատականութիւնների, վառ անհատականութիւնների ծնունդն ուշանում է, չի կայանում, իսկ նրանք՝ մեր երախտաւորները, աստիճանաբար ծածկուում են դասականութեան շղարշով:

Վերջին դասականը՝ Հրաչ Տասնապետեանն էր...

Կենդանութեան օրօք ոեւէ անհատին մեծարելու խնդրում բաւականաչափ ժլատ Դաշնակցութիւնը, պարզուում է, մօտ հինգ տարի առաջ, ինքն է նախաձեռնողը եղել Լոս Անճելըսեան հանդիսութեանը, որի ընթացքում մեծարողը, նման երեւոյթի անսովորութեան յարուցած տպաւորութեան տակ, կէսուրջկէսկտակ դամբանական է կոչել իր հասցէին ուղղուած խօսքերը: Եւ վերջում ինքնարընտրագրական այսպիսի տղերք արտայայտել: «Ծայրայեղութիւններէ խուսափած եմ միշտ, բան մը, որ տկարութիւն նկատուած է յաճախ...»:

Ես կենդանի վկան եմ նման «նկատումների»: Ես նոյնպէս, երբեմն-երբեմն, ունեցել եմ այդ թիւր գնահատումը...

«Բայց ես կը խորհում, շարունակում է Հրաչ Տասնապետեանը»՝ որ երեւոյթներու թէ անձեռու մասին ճիշդ չէ արագ եզրակացութիւններու յանդիլ, առանց համապատասխան համապարփակ ու բժախնդիր քննութեան: Բացարձակ ու գլխազիր ճշմարտութիւնը ոչ ոքի մեծանշան է ի վերջոյ եւ մանաւանդ, երկար

ժամանակի վրայ առնուած միշտ նախընտրելի է հաւաքականութեան մեծամասնութեան տեսակէտին վրայ հիմնուելով, զայն ի հարկին յղելով ու բարեփոխելով, հաւաքաբար հասնիլ բաղձալի միջինին: Ծիշդ կամ սխալ՝ հաւասարակշռութեան այս ձգտումը միշտ առկայ է եղած մէջս, եւ ես ջանացած եմ չըջապատիս երբեմն հակոտնեայ տեսակէտները հասարակ յայտարարի բերել եւ գէթ մեծամասնութեան համար ընդունելի եզրակացութեան մը յանգրի: Իսկ երբ իմ կարգիս մնացած եմ փոքրամասնութեան մէջ, ժողովրդավարական հասկացողութեամբ, անշուշտ, ենթարկուած եմ մեծամասնութեան տեսակէտին: Անհատական ես ստորադասուում հաւաքական եսին,՝ ահա հիմնական ուժը ընկերային որեւէ կազմակերպուած ամբողջութեան, ի միջի կայքը, ու մասնաւանդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան...»:

Ինքնաբնութագրումի սոյն տողերն արտաբերուած են խոստովանանքի հանգով եւ հնչերանգով, խոստովանանքին բնորոշ երկիւղածութեան լիցքով, ինչը այս դէպքում, եւ, առհասարակ, նման պարագաներում, խօսքին հաղորդում է բարձրակարգ հաւատարմութիւն, իսկ խօսքի տիրոջը պարզեւում Աստուծոյ կամ բացարձակ, գլխազիր ճշմարտութեան դիմաց խոնարհութեան գերագոյն վիճակ:

Սա ճորտի վիճակն է, ինչպէս կարող է թուալ ումանց, քանզի ծնրագրութիւնը, եթէ այդ վիճակին հասնելիս, դեռեւս գործածական են ստորագրութիւններն արտայայտող երկրային բառերը, կայանում է բացարձակի, գլխազրի եւ ոչ թէ դէպի նա տանող ճանապարհին խոյացած թուեքերի դիմաց: Մեծ թէ փոքր՝ նշանակութիւն չունի: Իւրային, թէ օտար՝ կարեւոր չէ: Կոպպաշտութիւնն է ճորտութեան ծնողը: Կուռքերն են, որ արգելանոցի գերանի նման խոչընդոտում են մեր ընթացքը դէպի բացարձակ, գլխազիրը: Այս ճանապարհին, պատմութեան մարմարին, որքան ասես փոքրիկ ճշմարտութիւններ են փորագրուած, որ հեշտ են սերտուում, որովհետեւ թէ արդէն յայտնագործուած են, եւ թէ փոքր հեշտ են արտասանուում, որովհետեւ առողջանութիւնից ու յիշողութիւնից բացի ուրիշ ոչինչ չեն պահանջում: Այս բարեմասնութիւններով եթէ օտարուած չես բնութիւնից, մեծ ցաւ չէ. թէ առողջանութիւնը կարող ես մարգել՝ մանր խճաքներ բերանդ գցելով մէ թէ յիշողութիւնդ՝ մարդկութեանը քաջ յայտնի բոլոր հնարամտութիւններով: Այդպէս էլ յաճախ վարուում են:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ՀԵՏ

Վահէ Օշականին նուիրուած, արդէն յայտարարուած երեկոյթին, կազմակերպիչները ինձ էլ խօսք ասելու պատուին արժանացրին, երբ տեղեկացան, որ Պէյրութում եմ: Բայց ես ստիպուած էի մերժել, որովհետեւ յանպատրաստի ելոյթը կամ նիւթի գերացանց իմացութիւն է ենթադրուում, ինչը ես չունէի,՝ եւ կամ պատասխանատուութեան պակաս ու անյարգալից վերաբերմունք, ինչը ինձ չէի կարող թոյլ տալ:

Մերժումս բացատրեցի նաեւ ինձ համար գոնէ հասկանալի, այլոց համար, թերեւս, արտառոց արտայայտութեամբ. «Ես Վահէ Օշականի գրականութեան սիրահարներից չեմ»: Եւ հիմա, երեկոյթից օրեր անց, թերասածութեան ինչ ծնունդն անբաւարարութեան զգացումը սպառնում է վերածել մեղքի զգացման: Որ Վահէ Օշականի գրականութեան սիրահարը չեմ, ճշմարտութիւն է, բայց ճշմարտութիւն է նաեւ շատածուածը. ինձ համար անորանալի է Վահէ Օշական անհատականութեան նշանակութիւնը: Ահա, սա էլ պիտի ասուէր, որ չասուեց հեռախօսային խօսակցութեան ընթացքում:

Ես մի քանի հանդիպումներ եմ ունեցել հակասութիւններով լեցուն, ինքնատիպ այդ անհատականութեան հետ: Առաջին անգամ՝ 1992ին, Սան Ֆրանսիսքոյում: Ընկերային հաւաքից յետոյ, մինչեւ մեկնումս, տեղի ընկերները հրաժեշտի սեղան էին բացել: Նախապէս ծրագրուած կարգով, թէ պատահականօրէն ես յայտնուեցի Վահէ Օշականի կողքին: Ակնոցի ապակիների տակից նրա սուր հայեացքը անթաքոյց հետեւում էր ինձ եւ այնպիսի տպաւորութիւն ունէի, որ նա աւելի շատ գննում էր հայաստանցու, քան լոււմ այս կամ ընկերոջ հարցերի պատասխանս: Եւ յանկարծ, լուռութեան մի պահ՝ որսալով, անակնկալ հարցը բեց.

- Իսկ դու ինչո՞ւ հարց չես տալիս: Այնեղծ ասած ես չիտթուեցի, ինչպէս աշակերտն է շփոթում ուսուցչի առջեւ, երբ անհասկանալի կամ խրթին հարց է տրուում:

- Ինչո՞ւ չես հարցնում, թէ ինչպէս ենք մենք ապրում, ի՞նչ ենք մտածում: Ինչո՞ւ չէք ցանկանում ճանաչել Սփիւռքը:

Եւ կրկին՝ ակնոցի ապակիները ճեղքող սուր հայեացքը: Սթափուելուց յետոյ ինձ համար այնքան պարզ էր հարցի պատասխանը, որ, նոյնիսկ,

Գլուխը բարը, թող այդպէս վարուեն, բայց գոնէ շանցնեն ճարտասանութեան, ասունքի ոլորտի սահմանները եւ, աստուած մի արասցէ, չփորձեն սերտածը, արտասանածը կիրաւել բազմաբովանդակ ու յարափոփոխ այս կեանքում: Պատմութեան մարմարին փորարուած փոքրիկ ճշմարտութիւնները, բոլորն անխտիր, ճշմարիտ են եւ կիրառելի միայն իրենց ժամանակի մէջ եւ իրենց պայմանների համար: Պոկիր մարմարից ամենակատարեալը, տեղափոխիլ այսօրուան կեանք եւ դու կը սպաննես թէ երկկուան ճշմարտութիւնը եւ թէ, այսօրուան կեանքը:

Ահա թէ ինչու է անհրաժեշտ ճշմարտութիւնների ոչ թէ սերտումը, այլ վերայայտնագործումը՝ քո ժամանակի մէջ, քո պայմաններին համար, որովհետեւ խաբկանք է՝ թէ ոչինչ չի փոխում եւ մենք, իբր, անվերջ նոյն չըջապատոյտի մէջ ենք թպրտում: Եթէ շատ խնդիրներ ունում են չլուծուած, դա չի նշանակում, թէ ոչինչ չի փոխուել: Խնդիրը կարող է մնալ անփոփոխ, լուծումն է՝ փոփոխական:

Իր անհատականութեան վրայ դասականութեան կնիք ունեցող Հրաչ Տասնապետեանը երբեք չէր արտասանում մօտ ու հեռաւոր պատմութեան մարմարի վրայ փորագրուած ճշմարտութիւններ, թէ եւ զբաղմունքի եւ կոչման բերումով, թերեւս ամենագիտակն էր, ամենախմբացականը: Քրիստափորի, Զաւարեանի, Ռոստոմի նամակները, թղթերը, արխիւային նիւթերը հրապարակելուց առաջ, քննախոյզ եւ առարկայական ուսումնասիրելու նրա պարտաւորութիւնը, անցած իրադարձութիւններին ոչ թէ հեռուից, այլ ներսից, ոչ թէ օտարի, այլ մասնակցի հայեացքով դիտարկելու բնատուր շնորհք, Հրաչ Տասնապետեանի դարձրել էր, գրեթէ, համահեղինակ:

Իսկ հեղինակները, սովորաբար, իրենք իրենցից մէջըբերումներ չեն անում: Ընդհակառակը, երբեմն, թուացեալ հակասութիւններ են դրսեւորում մէջըբերում արժանի սեփական եւ, յայտնագործած նոր մտքի միջեւ:

Բացարձակ, գլխազիր ճշմարտութեան առջեւ երկիւղածաբար ծնկի եկած Հրաչ Տասնապետեանը իր էր արձան մէջ պարզապէս տարբարում էր էր յաճախակի արտասանող ճշմարտութիւնները, որոնց ձեւակերպման կերպն էր ինքը աւելի կարեւորում, առաջացման ալքիմիան՝ մշտապէս մնալով միտքը, ճշմարտութիւնը յայտնագործելու ակունքում: Ակունքում է ամենայն բան լինում մաքուր: Ինչպէս աղբիւրի ջուրը:

Փոքրամասնութեան մէջ յաճախ լինելով,

նրա ենթակայութիւնը մեծամասնութեանը՝ յանուն ժողովրդավարական հասկացողութեան եւ հաւաքականութեան կազմակերպական ամբողջականութեան, չի նշանակել երբեք սկզբունքների դաւաճանութիւն եւ կամ, որ նոյնն է՝ աւելորդ գլխացաւանքից խուսանանում: Մտքի, գաղափարի եւ բարոյականութեան մաքուր ակունքներում մշտապէս բնակւող եւ աւելի հեռուն տեսնող նրա անհատականութիւնը, թերեւս գառնանալով եւ տառապելով, հասնումում էր, որ միտքը երբեմն ժամանակից առաջ ընկնելու սովորութիւն ունի: Չընկաւելելու աստիճան առաջ ընկնելու: Եւ, ուրեմն համբերատարութիւն է անհրաժեշտ, մինչեւ միտքը եփուի նաեւ այլոց մէջ:

Սա արդէն ոչ թէ փորձ, խելք, բնագր, կառավարման հմտութիւն, այլ իմաստնութիւն է կոչուում: Իսկ երբ մարդ իմաստնութեան է հասնում, յանկարծ պարզուում, որ իր կեանքի ընթացքում, նոյնիսկ, կիսատ - պոստ թողած զբաղմունքներն ու հետաքրքրութիւնները, թող որ իրենց տիրութանը քական ծանաղութեամբ, նշանակալի դեր են խաղացել անհատականութեան ձեւաւորման խոհանոցում: Ամէն ինչ իմաստաւորում է, դառնում ամբողջական կառոյցի անհրաժեշտ օղակ: Քչեբը գիտեն, որ Հրաչ Տասնապետեանը գրելու սէր եւ ձիրք է ունեցել: Նաեւ գրել է: Եւ այս ձիրքը, նաեւ վարժանքը, հետագայում պիտի օգտակար լինէին ճշգրիտ ու կուռ, իրօք, ամփոփ միտք արտայայտող նախադասութիւններ կազմելիս, անկախ նրանից, թէ ինչ նիւթ էր բացայայտուելու: Քչեբը գիտեն, որ նկարելու ձիրք է ունեցել: Եւ նկարել է: Ահա թէ ինչու է նրա խօսքը՝ գրաւոր թէ բանաւոր, պատկերաւոր: Նաեւ, փոքր - ինչ խաղացուին, թաքնուած հիւմորով:

Ջբաղուել է նաեւ հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութեամբ: 1962ին Հայաստանում շուրջ երկու ամիս բնակուելու օրերին, ուսուցչութեան մէջ վերատրակաւորւելու ժամերի հաշուին, այցելել է մեր պատմական յուշարձանները՝ Հոփսիսիմէ, Զուարթնոց, Տաթեւ, Հաղբատ, Սանահին, Գոշալանք, Գառնի, Գեղարդ, Սաղմոսապանք, Թալին, Մաստարա, Կարմրաւոր ու Մարինէ, հանդիպել եւ գրուցել է Կարօ Ղաֆաղարեանի, Մ. Հասարթեանի, Վարագապտ Յարութիւնեանի,

ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԵՓԵԱՆ
Ծար.ը՝ էջ 10

Յետոյ, երբ տարիներ անց, արդէն Երեւանում լիչեցրի իր խօսքը եւ իմ արձագանգը, նա ցոյց տուեց, որ տեղեակ չէ պատասխանից: Գուցէ՛ եւ, իրօք, տեղեակ չէր:

Հերթական հանգիպումս Սիտնիյում էր. նոր էր վերադարձել Հայաստանից: Հրաւիրեց իր տուն: Տիկին Արսինէն տանը չէր, դպրոցում էր: Փոքրիկ սեղան զցցեց, տաքացնելու համար լահմաչօ զցցեց փուռը եւ նստեցինք գորցիլ: Տարօրինակ գրոյց էր: Իշխող լուռութիւն էր: Աննչեւ, ոչինչ նշանակող հարց ու պատասխան: Ես, առհասարակ, լռակեաց եմ, ինքն էլ, կարծես շփոթի մէջ էր: Կցկտուր տպաւորութիւններէր ասում Արցախից, Երեւանից, Հայաստանից: Ես արդէն գիտէի, որ նա վիթխարի հեղինակութիւն ունի Սփիւռքում, գոնէ մտաւորական շրջանակներում, թերեւս, ոչ պաշտօնապէս հռչակուած առաջ, թերեւս, ոչ պաշտօնապէս, կարծես, զարմանալի չէր, որ մեր լուռ գրոյցը, անվերջ ընդհատուած էին հեռախօսազանգերը՝ Փարիզից, ամերիկաներից, Քանադայից... Որքան հասկանում էի կարճ, կտրուկ պատասխանները, բոլորին հետաքրքրում էր Հայաստանը, Վահէ Օշականի յայտնագործած Հայաստանը: Եւ բոլորին, իբրեւ վերջին, ամփոփիչ խօսք, Վահէ Օշականն ասում էր. պէտք է հաւաքուենք, խօսենք, շատ բան պիտի փոխենք...

Ինչպէս սասցիլ, ես արդէն գիտէի, որ նա սփիւռքեան մտաւորականութեան առաջնորդն էր, լիդերը, բայց չգիտէի, որ այն լիդերներից է, ովքեր համարձակութիւն են ունենում փոխելու իրենց իսկ ստեղծած շարժման, հոսանքի ուղղութիւնը: Հայաստանը եւ Արցախը վերափոխել էին Վահէ Օշականին:

Եւ մի վերջին հանգիպում՝ այս անգամ Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովուրդ: Նա ինձ հարկը տողար տուեց «Նորք»ի ծախսերի համար, նախապէս սրտառու է նրբանկատութեամբ ասելով՝ չե՞մ վիրաւորուի, արդօք, եթէ նման քաջանի: Հարիւր տողարը փրկութիւն չէր, բայց ես այնպէս շնորհակալ եղայ, կարծես մի տարեկան օժանդակութիւն էի ստանում: Վճռել էի ոչ մի դէպքում չծախսել այդ գումարը եւ երկար ժամանակ, մասունքի պէս, պահում էի՝ Մի նեղ օր չդիմացայ՝ ծախսեցի: Եւ թող Աստուած ինձ ների այս սրբապղծութեան համար:

ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԵՓԵԱՆ

Հրամանատար Գևորգ

ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ ՓՈԹՈՐԻԿ ԱՐԻՏԻ ՀԱՐՑՈՎ

Մեկ կողմէ Պէյրուսի մէջ տեղի կ'ունենայ արարական վեհաժողովը, միւս կողմէ քաղաքական ամպերը կը կուտակուին՝ ներքին հակադրութիւններու նախատեսութեամբ, հակադրութիւններ, որոնց մէկ մասը արծարծուեցաւ անցեալ շաբաթավերջին Դամասկոսի մէջ Սուրիոյ նախագահ Պաշչար Ասատի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ տեղի ունեցած հանդիպման ընթացքին:

Այս նոյն հակադրութիւնները նաեւ մէջտեղ եկան, երբ տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի յայտարարութիւններով արտայայտեց իր ընդդիմութիւնը կապակցաբար այն խնդիրին, որ իր դեկավարած նախարարութեան ընդհանրապէս թոյլ չէր տրուած հսկել արարական վեհաժողովին անդրադառնալու աշխատանքներուն: Այս ընդդիմութիւնը գուցէ արդիւնեացաւ նաեւ «ժողովրդավարութեան զինուորներ» անձնաթիւ կազմակերպութեան Պէյրուսի մէջ ցրուած թուեցիկներուն, որոնց մէջ Արիտի կ'ամբաստանուէր, որ ինք անցեալին գործակցած էր Իսրայէլի հետ:

Այս մէկը պատճառ դարձաւ, որ երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ եւս դուրս ելլէ իր լուսթիւնէն, բայց միեւնոյն ժամանակ հաստատելով, որ նախարար Արիտի հարցին լուծուող կախուած է նոյնինքն նախարար Արիտիէն եւ ներկայիս անհրաժեշտ է աշխատիլ վեհաժողովի յաջողութեան համար:

Այս վերջին հարցով զբաղեցաւ նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրի. ասոր համար ալ ան ժամանակաւորապէս ինքզինք հեռու պահեց վեհաժողովին առնչուող հարցերէն: Ան նաեւ կը մերժէ մտնել ներքին հարցերուն մէջ՝ իր գրաւը ղնելով վեհաժողովի անդամին վրայ:

Հարիրի այս առիթով նախարար Արիտի առաջարկած է, որ այս հանգրուանին նախարարը երբեք չարժարծէ վեհաժողովի տեղեկատուութիւնը իր նախարարութեան հսկողութիւնէն դուրս բերելու հարցը եւ յետագայ ատիկա մինչեւ վեհաժողովի աւարտը: Սակայն տեղեկատուութեան նախարարը ունէր այլ կարծիք մը, զոր ուզեց արտայայտել, որովհետեւ այդ առնչու-

թեամբ լուրը կրնայ հետագային դուրս բանալ նմանօրինակ ուրիշ հարցերու եւս:

Ինչ կը վերաբերի տեղեկատուութեան նախարարին կողմէ եւ անոր դէմ բարձրացած աղմուկին, ասիկա տեղի կ'ունենայ անոր համար, որ նախարար Արիտի նկատմամբ մասնաւորաբար անոր համար, որ ան կ'արժանանէ երկրորդական հարցեր՝ բաղադրաբար վեհաժողովին: Այդ հարցերուն կարգին ամէնէն կարեւորն է իր եւ իր նախարարութեան մեկուսացուիլ տեղեկատուական մարզին վերաբերող որեւէ ծրագրի: Մանաւանդ կարելի չէ ընդունիլ, որ մինչ Լիբանան կը նախագահէ այս ժողովին եւ վեհաժողովը կը գումարուի Պէյրուսի մէջ, Լիբանանի տեղեկատուութեան նախարարութիւնը չվերցնէ անոր դրօշը:

Վարչապետին կողմէ նախարար Արիտի մտահոգութիւններուն անտեսուելուն պատճառն ալ այն է, որ վեհաժողովին թղթածրարը կը գտնուի առաջին նախագահութեան մօտ: Ասոր համար ալ նախարար Արիտի ընդդիմադիր կեցուածքները կ'ուղղուին դէպի այս վերջինը, մանաւանդ որ առաջին նախագահութիւնը վեհաժողովի կազմակերպման աշխատանքներուն մէջ շեշտը կը դնէ պահպանութեան հարցերուն եւ ոչ թէ անոնց մէջ հաստատութիւններու եւ նախարարութիւններու դերակատարութեան վրայ: Այս մթնոլորտին մէջ անուղակի լարուածութիւն մը մէջտեղ եկաւ նախարար Արիտի եւ մշակոյթի նախարար Ղասսան Սալամէի միջեւ, մանաւանդ որ այս վերջինս վեհաժողովի աշխատանքներուն գլխաւոր համակարգողն է:

Այս բոլոր հարցերուն պատասխանը կրնայ չգտնուիլ վեհաժողովի կայացման նախօրեակին, մանաւանդ որ ինքզինք առարկայ կողմերէն եւ ոչ մէկը պատասխանատուութիւնը կը վերցընէ վեհաժողովի մթնոլորտի խանգարման:

ՌՈՋԱԼԱ ՊՈՒ ՄՈՒՆԱԷՅ

«Նահար»

«ՔՈՅՐ ՅՐՈՍԻՆ» ԴՊՐՈՑԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԴԻՊՈՒԱԾՈՎ ՓՐԿՈՒԵՑԱՆ, ԻՍԿ ԱՐԿԱԾԸ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ԲԱՑԱԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ԹՂԹԱԾՐԱՐԸ

Քորնիշ Մագրասի մէջ պատահած արկածը անգամ մը եւս լուսարձակի տակ առաւ Լիբանանի շէնքերուն ապահովութեան հարցը եւ ընդհանուր ապահովութեան համակարգին պատաստուածութիւնը շուտով օգնութեան փութալու: Շէնքի փլուզումը կրկին արժարծեց Լիբանանի մէջ տարածուած ապօրէն շէնքերու հարցը, որ տակաւին կը քննուի, դպրոցական կառոյցներու եւ հետեւողական դրութեամբ շէնքերու ապահովութեան ստուգման հարցերու կողքին:

Պատահածը նաեւ չուրի երեսը հանց շուտափոյթ օգնութիւնը հասցնելու աշխատանքներուն կազմակերպումը եւ այդ աշխատանքները դասաւորելու ու համապատասխան համակարգն ու մարդու միջոց պատրաստ ունենալու անհրաժեշտութիւնը եւ շինարարներու ապահովութիւնը:

Քորնիշ Մագրասի մէջ փուլ եկած վեց յարկանի շէնքը օգոստոսի 28-ին փլուզուեցաւ 1964 թուականին եւ անոր մէջ կայ «Քոյր Յրոսին» ղարկը, որ շէնքի փլուզմանը դիպուածով պարապէր՝ արձակուրդի պատճառով: Անպաշտօն տուեալներու համաձայն, արդէն արկածը պատճառած է 4 մահ եւ 10 վիրաւոր, որոնց մէջ կան այն անցորդները, որոնք այդ վայրկեանին իրենց ինքնաշարժերով կ'անցնէին շէնքի անոցներէն:

Այս հարցին քննարկման համար արդէն իսկ կազմուեցաւ յանձնախումբ մը, որ պիտի քննէ շէնքի յանձնարարի փլուզումին պատճառները եւ այդ առնչութեամբ տեղեկագիր մը պիտի պատրաստէ կարճ ժամանակամիջոցի ընթացքին: Եւ մինչ հարցաքննութիւնները ու պարզումները կը շարունակուին շէնքի ցրտարապետի գտնուած վայրը գիտնալու համար, ի յայտ եկաւ, թէ շէնքի տեղը կը գտնուի Լիբանանէն դուրս:

«Չեմ գիտեր, եթէ եղբայրս իր ինքնաշարժին մէջ փլուզուեցաւ տակ է»: Այս նախադասութիւնը կը կրկնէր իմատ Սըննոյի եղբայրը, որ լալով կը թափառէր եւ կը փորձէր կապուիլ իր եղբոր ընկալիչ հեռաձայնին եւ չէր յաջողեր: Մօրը վիճակը աւելի գէշ էր, ան չփորձած վիճակին մէջ կու լար եւ կը խնդրէր զինք շրջապատողներէն ստուգել, թէ գտնուած ընկալիչը իր գաւկիցի կը պատկանէր եւ կամ ինքնաշարժին թիւը տղուն թիւն էր: Ան այդ ահաւոր կացութեան մէջ կը փորձէր որեւէ տեղեկութիւն գտնել, որպէսզի յստականար, եթէ իր տղան փլուզուեցաւ տակ էր, մինչեւ որ գուժը լսուեցաւ, «Իմատ մահացած էր»:

Իմատ գոհ գացած էր Քորնիշ Մագրասի մէջ փուլ եկած շէնքին պատճառով, որ ինկած էր փողոցէն անցնող ինքնաշարժներուն վրայ՝ խճողում եւ իրարանցում յառաջացնելով: Այդ շրջանը տանող բոլոր ճամբաները գոցուեցան եւ շէնքին փլուզումներուն մօտ կրնային հասնիլ միայն լրագրողները՝ իրենց քարթերը պարզելէ ետք: Անցնող լրագրողները չէին կրնար մօտենալ շէնքին եւ կը մնային շէնքը եզերող դեղին ժապաւէններէն անդին, սակայն որոշ ժամանակ ետք դեղին ժապաւէնները գարդի վերածուեցան եւ անոնց տակէն ու վրայէն դէպի շէնքին փլուզուեցան սկսած ուղղուիլ բոլոր հոն գտնուողները:

Փլուզուած շէնքի մարդոց մի մասը կը փորձէին գիտնալ, այդ իրարանցումին եւ օգնելու աշխատանքները ստանձնելու համար եղած կռիւն իսկութիւնը:

Ականատեսներ կը վկայեն, թէ զօրաւոր ձայնէ մը եւ երկրաշարժի նման ցնցումէ մը ետք երկու վայրկեանի մէջ շէնքը ամբողջութեամբ փլուզ է: Շէնքը, որ շինուած է 1964ին, երկայրկանի էր եւ շինուած էր աւազային քարէ. սակայն 1974ին անոր վրայ աւելցած են մնացեալ յարկերը, որոնք շինուած են պեթոնէ, եւ ըստ երեւոյթի, այդ է շէնքին փուլ գալուն գլխաւոր պատճառը:

Երբ շէնքը փլոււ, անոր մէջ կ'աշխատէր տասը հոգի, որոնք կը կատարէին վերանորոգութեան աշխատանքներ, իսկ փլուզուեցան տակ մնացին չորս ինքնաշարժներ:

Ականատեսներ կ'ըսեն, թէ ոմանք շէնքին փլուզման ընթացքին ցատկած են եւ՝ իրենց կեանքը փրկած, կան նաեւ մարդիկ որոնք արագօրէն դուրս ելած են իրենց ինքնաշարժներէն:

Լիբանանի Կարմիր խաչը շուտով շրջան ուղարկած է 8 ինքնաշարժներ եւ շուրջ 40 հիւանդապահներ:

Իսկ բարգաւաճման եւ վերակառուցման խորհուրդը կապեր հաստատած է զանազան անձերու եւ կողմերու հետ՝ օգնութեան աշխատանքները արագացնելու համար:

Ան նաեւ նախաձեռնած է 24 ժամուան ընթացքին ճամբաներու նորոգութեան եւ փլուզուեցան վերջնելու աշխատանքին:



Քորնիշ Մագրասի մէջ փլուզուած շէնքի տեսարանը:

Նախադասութեան խորհուրդը իր ժողովին ընթացքին որոշեց կազմակերպել օգնութեան յատուկ կազմ մը, որ միջոց պատրաստ ըլլալ օգնութեան փութալու, կարեւոր նկատեց հետապնդել շէնքերու ապահովութեան հարցը եւ խիստ ըլլալ այս գծով: Փլուծ շէնքը եզերող շէնքերը քննելու պարագան կարեւոր նկատուեցաւ, ինչպէս նաեւ կրթութեան նախարարութիւնէն պիտի խնդրուի բոլոր դպրոցներուն շէնքերը ստուգել եւ փլուծ դպրոցին վնասները հոգալ:

Այս բոլորին կողքին ցաւալի երեւոյթ է ապահովական ուժերու ունեցած վարուելակերպը շրջան հասնող լրագրողներուն հետ:

Անոնք ենթարկուեցան նուաստացումի եւ նոյնիսկ ծեծի: Տեղական եւ օտար մամուլը ներկայացուցիչներ շատ իրտ վարուելակերպի հանդիպեցան, երբ հասան փուլ եկած շէնքին շրջանը: Անոնց ձեռքէն իրենց ֆիլմերը առնուած եւ փճացուած է, որպէսզի չկարենան հրատարակել կամ ցուցադրել բրտութեան ենթարկուողներուն նկարները:

ՍԱՅԻՐ (Յապաւուած)

ԱԼԱԳ ՇԱՐԱԹԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին, այսու կը յայտնենք թէ Ալագ շաբթուայ արարողութիւններ պիտի կատարուին Ս. Աստուածային Եկեղեցւոյ մէջ, հետեւեալ ժամանակացոյցով.

Ալագ Երեւոյթի ձաշու պատարագ եւ Երեւոյթի անուտեան ժամը 10:00ին:
Կարգ Ոսնուայ՝ կ'սուրբ ետք ժամը 4:00ին, արարողութիւնը պիտի կատարէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԳԱՆ ԱՐՔ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Կարգ խաւարման՝ երեկոյեան ժամը 7:30ին:
Ալագ Ուրբաթ՝ կարգ թաղման կ'սուրբ ետք ժամը 4:00ին, արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓՎՆՈՍԵԱՆ

Ալագ Շաբթի՝ Ս. Երեւոյթի անուտեան ժամը 7:30ին:
Ս. Չառիկ՝ Կիրակի, 31 Մարտ 2002, պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԳԱՆ ԱՐՔ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու այս արարողութիւններուն:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«ԻՇԽԱՆԱՄԷՏ» ԵՒ «ԸՆԴԴԻՄԱԴԻՐ» ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ ԸՄՐԺՈՒՄՆԵՐԸ՝ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ

Արարական վեհաժողովի կայացման նախօրեակին կը թուի, թէ ընկերային - տնտեսական բազմաթիւ հարցերու եւ այս շրջագիծին մէջ աշխատանքական շրջանակներու մէջ ի յայտ եկած շարժումներուն քննարկումը յետագայում է վեհաժողովին համար: Այս առնչութեամբ կը նախատեսուի, որ համադաշնակցութիւնները եւ ընդդիմադիր սենտիքաները վերաշխուժանան՝ իրենց պահանջներուն իրականացման ուղղութեամբ աշխատելու համար:

Իր կարգին, աշխատանքական մակարդակի վրայ տեղի ունեցած բանավեճէն ետք, սենտիքաներու ազգային համադաշնակցութեան նախագահ Թանիոս Անտրատոս յայտարարեց, որ

թիւնն է ապահովել աշխատանքներու աշխատանքներուն շարունակականութիւնը եւ առաջին հերթին զանազան ոլորտներու միջակայքը: Այն ձեռքբերումները, զորս աշխատանքները կը ստանան, կառավարութեան կողմէ տրուած նուէրները չեն, այլ իրաւունքներ, որոնք ձեռք ձգուեցան շնորհիւ աշխատանքներու պայքարներուն:

Ան շարունակեց. «Տնտեսական կացութեան ճիշդ վերլուծման բացակայութիւնը պատճառ կը դառնայ, որ չփոթ ստեղծուի պահանջներուն եւ մեր ապրած իրականութեան միջեւ: Ասոր համար անհրաժեշտ է ճիշդ եւ յստակ վերլուծում եւ անկէ ետք է, որ պէտք է առաջադրել այն պահանջները, որոնք կարելի է իրագործել»: Ան նշեց, որ ամէնէն օրինակելի լուծումը կրնայ ըլլալ այն, որ մշակուի ընկերային ապահովութեան համաձայնութիւնը մը կամ գործադրութեան հիմնադրամ մը՝ աշխատանքներու ապահովութեան համար:

Անտրատոս նկատել տուաւ, որ՝ «Իբրեւ սենտիքայի պատասխանատուներ, մեր առաջնային պատասխանատուները»

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ


Ալագ Ուրբաթ, 29 Մարտ 2002, կ'սուրբ ետք ժամը 4:00ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ քաղման արարողութեան պիտի նախագահէ եւ պիտի քարոզէ՝

ՀՈԳՇ. Տ. ԳԵՂԱՐԴ ԱՐԸ. ՔԻՒՍՊԵՔԵԱՆ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՓԻՉԷԼ ՌԱԶՁՈՒՔ

«Անուար»



Կոնցալան

ՆՇԱՆԱԻՈՐ ԿԻՆԵՐ

ՄԱԼՄԱ ՊԸՆՆԱՆԻ

Մարտի պատմության մէջ առաջին անգամ ըլլալով թաղաւորը անցեալ շաբաթ իր ժողովուրդին ներկայացուց կինը:



